

սուղի հոգու մէջ: Ի՞նչ կը լինէր, եթէ ես ժամանակ ունենայի ցոյց տալ ձեզ Պօղոս առաքեալին, որ Քրիստոսին նուիրել էր իւր սրտի բոլոր հաւատը, բոլոր բերկրութիւնը և բոլոր զգացմունքները:

Բայց Քրիստոս սէր աւետարանելով՝ յայտնում է իրան՝ որպէս կեանքի աղբիւր: Եւ արգարե՝ Նորա անձնաւորութիւնից մինչև այժմ հասում է կեանքի ու սրբութեան մի անսպառ աղբիւր: Միտք արէք թէ ի՞նչ իմաստ պարունակուում է այն պարզ սուրբ խօսքերի մէջ, որով դառնում է Նա երկրիս ամեն վաստակեալներին թէ՛ «եկա՛ք առ իս», և այն խոստման մէջ, որ որքան վսեմ է, այնքան էլ գերմարդկային՝ թէ «Գու՛ք կը գտնէք հոգու խաղաղութիւն»: Հէնց այս մտքով է, որ Նա կազմում է խորհրդաւոր ընթրիքի սուրբ սեղանը, հրաւիրելով ապագայ ժամանակի բոլոր հաւատացեալներին՝ ճաշակել Նորա բեկեալ մարմինն և խմել անսպական արիւնը, որ հեղուում է աշխարհի մեղքերի քաւութեան համար և այդ պատարագը նրանց համար հաւատոյ մշտնջենական առարկայ է դարձնում: Վերջապէս Նա այս իմաստով թողնելով իւր աշակերտներին՝ այն մեծ րօտէին, երբ աւարտելով իւր գործը, եթէ նա միայն մեծ մարգարէ էր, պէտք է յետ քաշուէր և նոցա հայեացքը դէպի Աստուած դարձնէր— Նա դառնում է դէպի նրանց ասելով այն խօսքերն, որոնք դարերի ընթացքում մխիթարում են հաւատացեալներին. «Ես ընդ ձեզ եմ՝ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»:

(Նորոշակէլէ)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Նորոշակէլ-Դէլէն).

ԿՆՈՋ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ: Պսակի լուծումն մեր ժամանակ աւելի և աւելի յաճախ կրկնուում է, սորա հետ միասին քարոզուում է է նոր վարդապետութիւն կնոջ ազատութեան մասին, որ անշուշտ բովանդակում է իւր մէջ և այր մարդու ազատութեան խընդիրը: Այս նոր վարդապետութիւնը մասամբ երևան է գալիս «աղապար»

«Երոյ» ապօրինի վարդապետութեան ձեռքի, որով ներկայ ամուսնութիւնը հնազանդ հաստատութիւն է համարուում և որ կամենում է ամուսնութիւնը հիմնել միայն սրտի ազատ ձգտման վերայ, իսկ մասամբ նոր վարդապետութիւնը ձգտում է բարձրացնելու կնոջ դիրքն, ազատել նրան նախկին հպատակութիւնից և բոլորովին հաւատարմել նրան այր մարդու հետ: Առաջին տեսակի վարդապետութիւնն, որ պահանջում է կնոջ ազատութիւնը յանուն «Երոյ», կը կոչենք ազատութեան «Գէղէցի-Գիւտիան» «-ղլ-Նի-ն»), իսկ երկրորդ տեսակի վարդապետութիւնն, որ պահանջում է նոյնը յոռնուն «Տարր-Իսկի իր-ան» կը կոչենք «քաղաքական-հասարակական ուղղութիւն» անունով: Նորա երկուսն էլ մերժում են քրիստոնէական հայեացքը կնոջ և ամուսնութեան վերայ: Անտարակոյս քրիստոնէութիւնն ազատեց կնոջ և հաւատարեց նրան այր մարդու հետ, որովհետեւ նա նայում է կնոջ վերայ իբրեւ ըստ պատկերի Աստուծոյ ստեղծած արարածի վերայ, մասնակից է անում նրան յաւիտենական կենաց շնորհաց, այր մարդուն հաւասար մասնակցութիւն է տալիս նրան Աստուծոյ խօսքի մէջ, մկրտութեան և հաղորդութեան մէջ և այլն: Բայց հաւատարութեան այս յարաբերութեան հետ, որ միացնում է այր և կին մարդոց անկեղծ մտերիմ կենակցութեամբ, քրիստոնէութիւնը հաստատում է կնոջ հնազանդութիւնը մարդուն—հնազանդութիւն, որոյ հիմն դրած էր գեռ մարդու ստեղծագործութեան ժամանակ: Որովհետեւ այրը կնոջ գլուխն է, ինչպէս Քրիստոս Վրդի է և Փրկիչ եկեղեցւոյ: Եւ ինչպէս եկեղեցին հնազանդ է Քրիստոսին, այնպէս և կանայք պէտք է հնազանդ լինին իրանց մարդոց ամեն բանում (Եփես. ե. 24, Առ. Պետր. գ. 1):

Ընդդէմ այս պարտականութեանց և հնազանդութեան նոր վարդապետութիւնը զինաւորուում է ամեն կերպով և նոյա կատարեալ ջնջումից նա առաջ է բերում ամբողջ շարք շատ նշանաւոր հետեւանքների:

Ազատութեան գեղեցկագիտական ուղղութեան կուսակիցները գովաբանում են ազատ սէրն իբրեւ հակապատկեր ամուսնութեան գերութեան և ընդ նմին գովաբանում են հանճարեղ, ամեն նախապաշարումներից բարձր կանգնող կնոջ, որ ապրում է ազատ սիրոյ

շրջանում, գեղեցկագիտական դուարձութեանց մէջ, մանաւանդ գեղարուեստի պատճառած վայելչութեանց մէջ և մինչև իսկ ինքը պարապում է գեղարուեստական ստեղծագործութեամբ: Այս ճիշտումն և ուղղութիւնն երևեցաւ նախ վիպասանական դպրոցում՝ Գերմանիայի մէջ և արտայայտուեցաւ Ֆր. Շլեգէլի յայտնի «Լիւցինդա» վէպի մէջ, յետոյ նա երևան եկաւ զանազան ձևերով թէ Գերմանիայում և թէ Ֆրանսիայում (Ժորժ Զանդ): Այստեղ ուր տիրապետող է ազատութեան քաղաքական-հասարակական ուղղութիւնը, քարոզուում են ընդհանուր մարդկային իրաւունքներն, որոնք խլած են կնոջից, ինչպէս պնդում են ազատութեան կուսակիցները: Այս ուղղութեան, որ շատ փոխակերպութիւնք ունի, պատկանում է զորօրինակ Զոն Ստիւարտ Միլի շարագրութիւնը կնոջ հնազանդութեան վերայ: Այս ուղղութեան հետևողները հետևեալն են քարոզում: ստանդիկնութեան և մայրութեան կոչումն կնոջ համար շատ սահմանափակ է, ի բնէ նա կոչուած է նոյն հասարակական գործունէութեան համար ինչպէս և տղամարդը, բայց աւելի զօրեղ սեռը (արականը) անյիշատակ ժամանակներից ի վեր գաղտնի համաձայնութեամբ աւելի թոյլ սեռը պահել է հնազանդութեան մէջ և խոչընդոտ էր լինում կնոջ զարգացման և իւր ընդունակութիւնքը գործադրելուն, որոնց վերաբերմամբ նա բոլորովին հաւասար է այր մարդուն: Սորա վերայ աւելացնում են հետևեալը՝ քրիստոնէութիւնն այս վերաբերութեամբ չը կարողացաւ ազատուիլ արևելեան նախապաշարումներից: Այսպէս յանուն «մարդկային իրաւանց» պահանջում են նոր օրէնքներ, որոնք կնոջ իրաւունքներն ապահովէին—ոչ միայն օրէնքներ կայից և ժառանգութեան մասին, ոչ միայն կանոններ արձակման մասին, այն է որ աւելի հեշտացնեն ամուսնութեան կապի խղումն—ոչ միայն օրէնքներ, որոնք թոյլատրէին ժամանակաւոր ամուսնութիւն, ընդ նմին իւրաքանչիւրի բարի դիտողութեան թողնելով ժամանակի որոշումն, այլ պահանջում են օրէնքներ, որոնք կնոջ հաւասարէին այր մարդու հետ ամեն վերաբերութեամբ:

Ախալ յեղափոխական գաղափարները հաւասարութեան մասին, որոնք վաղուց կշիռ ստացել են պետական կեանքում, այժմ կամե-

նում են թափանցել և ընտանեկան կեանքի մէջ և խղել այն կապն, որ բոլոր մարդկային հասարակութեան արմատն է: Ազատութեան երկու ուղղութիւնը էլ հեշտութեամբ փոխանակում են միմեանց և երկուն էլ կարող են մի կնոջ անձնաւորութեան մէջ բովանդակուիլ: Բայց վերեւը յիշուած գեղեցկագիտական ուղղութիւնը կամ այն ուղղութիւնն, որոյ խնդիրը զանազան գոյներով սէլն է, ամենից աւելի մօտիկ է կնոջ բնութեան և աւելի հեշտութեամբ կարող է իրագործուել իրական կեանքում: Ընդհակառակն քաղաքական ազատութեան ուղղութիւնն է աւելի այնպիսի տեսութիւն, որ թէև կարող է յոյժ զարգացած յաշտկոտութեան և ընդարձակ գրականութեան առարկայ դառնալ և շատ ընդունակ է տարածելու գաղափարների մեծ խառնակութիւն, բայց երբէք չէ կարող իրագործուել և իրանք կանայք էլ այնպէս լրջութեամբ չեն վերաբերում՝ դէպի նա, ինչպէս դէպի սէրը: Նա շատ շատ կարող է որոշեալ փորձերի առիթ տալ և կարող է մի տեսակ յարձակումներ անել կեանքի սոյնորական կազմակերպութեան վերայ: Այս երևեցաւ յեղափոխութեանց ժամանակ, զորօրինակ 1848 թուականին կանայք մեծ բազմութեամբ հանդէս եկան քաղաքական խնդիրներով ու ցոյցերով, կազմում էին քաղաքական ժողովներ և մինչև անգամ հիմնեցին քաղաքական ժողովարան (կլուբ), որ շուտով փակուեցաւ: Այն կանայք, որոնք երևում էին պանդոկներում և սրբձարաններում՝ տղամարդու շորերով և սիգարը բերաններում, պատկանում էին աւելի ազատութեան քաղաքական քան գեղեցկագիտական ուղղութեան:

Կարող են մեզ հարցնել, թէ արդեօք մենք ճանաչում և խոստովանում ենք այս ազատասիրական ձգտմանց մէջ որ և է չափով արդարութիւն: Անշուշտ մենք ընդունում և ճանաչում ենք, որ ինչքան նոցա պատերազմը յարուցած է ներկայ ամուսնական իրաւանց դէմ, այնքան նա ստանում է արդարութեան և օրինաւորութեան կերպարանը, ի պատճառս բազմաթիւ գոյքալու ամուսնութեանց, որոնց մէջ կանայք ենթարկուում են ամօթալի բռնութեան, իրանց ամուսինների կողմից: Այսպիսի վիճակ նկարագրած է շատ վէպերում, որոնց մէջ յայտնած են գանգատ կնոջ վիճակի մասին և պա-

Հանջ, որ նա ազատուի այգպիսի անարժան ստրկութիւնից և մենք բնաւ չենք ժխտում, որ այդ նկարագրութիւնը յաճախ համապատասխանում են տխուր իրականութեան: Բայց բոլորովին սխալ է կարծիքը, թէ գործին օգնել կարելի է մարմնոյ անզսպութեամբ կամ յեղափոխութեան միջոցով և յեղափոխական օրէնքների զօրութեամբ: Ամուսինները կարող են միմեանց հազար տեսակ զրկանք ու տանջանք պատճառել, որոց արգելք դնել չէ կարող սչ մի քաղաքական օրէնք: Այստեղ օգնել կարող է միայն քրիստոնէութիւնը, բայց վերոյիշեալ վէպերի հեղինակները, մանաւանդ այդ տեսակի կին հեղինակները շատ հեռու են մտածելուց և հասկանալուց, որ բոլոր նկարագրած թշուառութիւնը առաջանում են հէնց նրանից, որ կեանքն ընթանում է արտաքոյ քրիստոնէութեան: Ընդհակառակըն նոքա մերժում են և ծաղրում են այն միակ փրկարար դեղն, որ կարող է բուժել կամ գոնէ թեթեւացնել հիւանդութիւնը: Նոյնը կարելի է ասել և քաղաքական-հասարակական ազատութեան առաջնորդների մասին: Նոքա նախապէս քրիստոնէութիւնը մերժում են: Եւ թող մինչև անգամ նոքա հաւատացնեն, որ իրանք չեն ջնջում ամուսնութիւնն, այլ միայն բարեփոխում և ազնուացնում են նրան. բայց և այնպէս նոքա իրողապէս ոչընչացնում են ամուսնութիւնը: Ձերբազատած կնոջ հետ, որ չէ կամենում հնազանդել իւր ամուսնուն և չէ կամենում հասկանալ, որ նա կարող է կառավարել տունը միայն և եթ իբրև իւր մարդու հաւատարիմ օգնականն և որ իւրաքանչիւր անհամաձայնութեան դէպքում առաջարկում է մեկնումն միմեանցից—այսպիսի կնոջ հետ չէ կարելի ապրել միասին խաղաղութեամբ և համաձայնութեամբ: Եւ երբ ամուսնութեան անքատելիութեան վարդապետութեան հակառակ պահանջում է, իբրև գլխաւոր պայման, որքան հնար է հեշտ և յարմարագոյն լուծումն պսակի, այգպիսի դէպքում ամուսնութիւնը գաղարում է բարոյական հաստատութիւն լինելուց:

Ինչ վերաբերում է այն հիմանց, որոց վերայ սովորաբար կանգնում է կնոջ կարծեցեալ իրաւունքը կատարեալ հաւատարմութեան մասին տղամարդու հետ, նոքա՝ այդ հիմունքներն առաջ են գալիս կնոջ բնութեան, նշանակութեան և ընդունակութեանց վերայ ու-

նեցած այնպիսի հայեցակէտից, որ բոլորովին հակառակ է իրականութեան: Բոլորովին անկանոն ձգտումն է կնոջ ընտանեկան և տնային կեանքից հանելով նրան հասարակութեան կեանքի մէջ մտցնելն, ուր նա անշուշտ այնքան աւելի կը մեղանչէ իւր նշանակութեան դէմ, որքան եռանդով անձնատուր կը լինի այդ հասարակական կեանքին, թէ և միայն երեւակայութեամբ: Կինն այնպիսի ընդունակութիւնք և շնորհք ունի, որոնք տուած չեն սովամարդուն և որոյ վերաբերմամբ այր մարդը չէ կարող հաւասարուիլ նրան: Բայց նորա ընդունակութիւնք հոգեկան—զգացողական են, ուրեմն ոչ զուտ հոգեկան և հէնց այս սրտի տարրի մէջ է այն, որոյ զօրութեամբ կինն ընդունակ է լինելու մարդուն օգնական և մխիթարիչ, անտես մալր, քոյր, ընկերուհի և այս ձևով անձամբ ներկայացնելու ընդհանուր մարդկային և քրիստոնէական սկզբունք—այդ սրտի տարրի մէջ է կայանում այն առաւելութիւնն, այն առանձին փառքն, որ շնորհած է կին մարդուն: Բայց հասարակական կեանքի համար նորա ընդունակութիւնքն և շնորհքն անպէտք են: Կանացիութիւնն է ամօթխածութեան նուրբ զգացմունքն, ողջախոհ չափաւորութիւնը վերաբերմամբ նորա շուրջն եղածների, երկոտութիւնն անցնելու բնութեան որոշած սահմանից: Կանացիութեան նշանակն է քօղը: Կանացի բնութեան յատուկ է խորին ընդունակութիւն ամեն վսեմի համար, բայց նա հրապարակաւ հանդէս չէ բերում ըմբռնածն ու սեպհականածը, այլ պահում է իւր սրտում և հաղորդում է այն նեղ շրջանին, որոյ մէջ նա հաստատուել է և ապաստանարան գտել:

Այսպէս խօսելով մենք չենք կամենում կնոջ հեռացնել ուսումնական և գեղարուեստական լուսաւորութիւնից: Եւ մենք բնաւ չենք ուրանում, որ գեղարուեստական վերաբերութեամբ կան կանացի հանձարներ, որոնք կարող են հասարակութեան առջ նշանաւոր երկասիրութիւնք: Առ հասարակ անհնարին է կնոջ և այր մարդու բնաւորութեանց մէջ ճիշդ որոշ սահմանագիծ քաշել այնպէս, որ մի սեռը չունենար այն, ինչ որ ունի միւսը և այս վերաբերելի է ամեն կենդանի արարածներին: Բայց պնդում ենք, որ կնոջ այդպիսի գեղարուեստական և գրական գործունէութիւնը պէտք է

երևի հասարակութեան առաջ միայն իբրև բացառութիւն, այն ինչ ներկայ գրականութիւնը չստանալու հարուստ է կանաչի գլխա-
կան երկերով: Պնդում ենք նայնպէս, որ կնոջ գեղարուեստական և
գրական գործունէութիւնը պէտք է ենթարկուի նորա գլխաւոր
կոչման, որ նրան մասնացոյց է լինում տնային կեանքի և գերզաս-
տանի վերայ: Ի վերջոյ մենք համոզված ենք, որ ոչ մի կանաչի տա-
ղանդի չէ տուած կարողութիւն գեղարուեստի և գիտութեան մէջ
իսկ—ստեղծագործական և կատարելապէս առանձին գործունէու-
թիւն զարգացնելու, ստեղծելու այնպիսի մի գործ, որ գեղարուես-
տի և գիտութեան պատմութեան մէջ ունենար յիշատի իրական
կշիռ, յառաջադիմութեան համար նշանակութիւն ունենար, այն-
պէս որ գեղարուեստի և թէ գիտութեան պատմութիւնը կը մնային
նոյնն, եթէ կանաչի արուեստասիրական երկասիրութիւնը աշխարհ
չը գային էլ: Ազատութեան պաշտպանները, զօրօրինակ Զոն Սո-
Միլլը, այն կարծքի են, թէ կանաչի գեղարուեստական և գրական
օրինակելի երկասիրութիւնը իսկոյն հանդէս կը գան, երբ կանաչք
կազատուին այդ մարդու բռնութիւնից, որ թուլացրել է նոցա ըն-
դունակութիւնն և խօշնդոտ եղել նոցա զարգացման: Կարծում են
որ այն ժամանակ կանանց միջից հանդէս կը գան Հոմերոս, ապա
Արիստոտել, Բեահոլէն: Մենք կանգ չենք առնիլ այս կարծքի վե-
րայ, որ հիմք չունի, այլ կը հեռուենք միայն «Երաժշտական Դաստի»
փորձին: Արհեստն, որոյ մէջ կնոջ տաղանար կարող է հասնել իս-
կական ինքնուրոյնութեան, բեմական արհեստն է և այս հէնց այն
պատճառով, որ նա իսկապէս նմանողական արհեստ է, փոխ առած
բանաստեղծական ստեղծագործութիւն է: Բայց և այս արհեստի
մէջ կնոջ համար կայ մի տեսակ վտանգ:

Ներկայումս ժամանակակից ոգւոյն պահանջներին բաւարարու-
թիւն ապու համար փորձ փորձուեցաւ թոյլատրել կանանց լինելու
ուսանող կատարեալ ակադեմիական իրաւունքներով, նոյնպէս իրա-
ւունք արուեստ պետական քննութեան, որ պէտք է բանար նրանց
ճանապարհ պետական պաշտօնների համար, եկեղեցական պաշտօն-
ների վերաբերմամբ կայ առանձին դժուարութիւն, որովհետեւ Ս.
Գրոց մէջ պարզապէս առած է, որ կինը պէտք է լուրջ եկեղեցում

(Կորնթ. Ժ. 34): Այսպիսի փորձերի մէջ մենք կարող ենք տեսնել միայն տգեղութիւն և իրերի բնական կարգի տապալումն, որ պէտք է ինքն իրան ոչնչանայ իւր ոչնչութեամբ: Միակ գիտութեան կանոնն, ուր կինը կարող է տեղ ունենալ, կարծես, բժշկութեան գիտութիւնն է: Ամենևին դատապարտելի չէ, որ կանայք իրանց նուիրում են բժշկական արհեստի մի քանի ճիւղերի ուսումնասիրութեան, որպէս զի կարողանան բժշկական օգնութիւն հասցնել իգական սեռի անձնաւորութեանց: Բայց մենք հարցնում ենք, արդեօք լավ է և արդարութիւն է նրանց ի շարս այր-բժիշկների դասել հաւատար իրաւունքով և արդեօք նոքա չը պիտի պատաւորուին գործադրելու իրանց արհեստը միայն որոշեալ սահմաններում և անց այր բժիշկների հսկողութեան ներքոյ, որոնք աւելի ազատ ուսումնական շրջահայեցողութիւն ունին: Ազատութեան պաշտպանները պահանջում են էլի, որ թոյլատրուի և դատական պաշտօններ վարելու, զօրորինակ որ նոքա կարողանան փաստաբաններ լինեն և դատաւորներ, նոյնպէս ունենան իրաւունք ոչ միայն պետական ժողովի անդամներ ընտրելու, այլ և ինքեանք ընտրուին անգամ պետական կամ պատգամաւորաց ժողովի: Այս դէպքում կնոջ ազատութեան կուսակիցներն ներկայացնում են իրանց այնպիսի կանայքի բնութիւն, որ բոլորովին տարբեր է իրականից և առանց ուշադրութեան են թողնում կնոջ ոչ-իրաւաբանական բնութիւնն, որ հակամիտ է աւելի զգացմունքի ենթարկուելու, քան առարկայական հիմունքներին և անգործ խորհրդածութեանց յարմարուելու: Չեն բացառել նոքա և այն հանգամանքը թէ ինչպէս կրնիման գործերն, երբ այդ կանայք—փաստաբանները, դատաւորները, պատգամաւորաց ժողովի անդամները սպասելիս կը լինին իրանց յղիութեան լուծման և կամ երբ ծննդից յետ պառկած են անկողնում: Բայց իրապէս հօ չէ կարելի ծածկել, որ այս բնական իրողութիւնը գոյութիւն ունին և չէ կարելի նրանց թեթեւութեամբ վերաբերուիլ, կամ նայել նոցա վերայ իբրև չնչին իրողութեանց վերայ: Այս դէպքերը կան իրական կեանքի մէջ, որ պարզապէս ցոյց է տալիս, որ կնոջ շրջանն ոչ թէ հասարակական, այլ բնատանկան կեանքն է: Պետութիւնը չը պէտք է հակասութեան մէջ

լինի իւր սեպհական հիմնական հաստատութեան հետ, այլ ընդհակառակն պէտք է պահպանէ և պաշտպանէ այդ հաստատութիւնն, որին ի միջի այլոց վերաբերում է և այն պահանջն, որ կինը ծնանի զաւակներ և դատարարի է նրանց հայրենեաց համար: Հէնց այս պատճառով պետութիւնը չէ կարող թոյլ տալ, որ կանայք հրաւիրուին այնպիսի պաշտօնների, որոնցով խախտուում է գերդաստանի կեանքը—ամբողջ հասարակութեան այս նշանաւոր հիմն:

Կնոջ քաղաքագիտական ընդունակութիւնքն ապացուցանելու համար մատնացոյց էին լինում պետութեանց յայտնի կառավարիչ կանանց վերայ, որոնք արքունական գահի վերայ բազմած մեծ պետական տաղանտներ են արտայայտած և այստեղից արին այն եղբակացութիւնը, թէ ցանկալի կը լինէր ունենալ կին նախարարներ, մանաւանդ խորհրդարանի նախագահներ (Չոն Ստիւարտ Միլլ): Ան/իճելի է, որ եղել են թագաւորական գահի վերայ քաղաքական հանճարով օժտուած կանայք, զորօրինակ Անգլիայում, Ռուսաստանում, Աւստրիայում: Կարելի է համաձայնիլ, որ անգլիական եղիսաբէթ թագուհին այնպիսի նշանաւոր քաղաքական միտք և կամք ունէր, որ թոյլ չէր տալիս, որ իւր կանացի թուլութիւնք աղգեցութիւն ունենային պետական գործերի վերայ և նորա մասնաւոր սիրահարական հանգամանքներն երբէք չէին կարողանում նրան մոռանալ տալ պետութեան կառավարչի իւր դիրքը: Բայց այդպիսի առանձնապէս օժտուած անձնաւորութեանց վերայ պէտք է նայել իբրև իգական սեռի բացառութեանց վերայ, որովհետև ի շնորհս յայտնի *lusus naturae*-ի (բնութեան խաղի), նոքա ստացած են այդ մարդու բնութիւն: Ելէնշլեգէր բանաստեղծն իւր Մարգարիտա թագուհու բերանը դնում է հետևեալ խօսքերը.

Այո՛, ես «կին» եմ: Եւ այս խօսքը նշանակում է՝ ամուսին, հարս, դուստր կամ քոյր, որ յենուած է տղամարդու վերայ, ինչպէս թոյլ բաղեղը յենուում է կաղնու վերայ, որի վերայ, նա փաթաթուում է: Բայց կառավարիչ կինն, որին հպատակում է ամբողջ ազգը, ինքն է կաղնի: «Լսում ես եղբայր»:

Արդէն այս համեմատութիւնը Էնշլեգէրը—հետ ապացուցանում

է, որ այստեղ իսկապէս հասկացուում է բացառութիւն իգական սեռից, թէւ մենք չենք պնդում, որ կնոջն անշուշտ պէտք է ներկայացնել բաղեղի ձեւով: Բայց վերոյիշեալ հանճարեղ կառավարիչ կանանց մէջ նկատման արժանի է առանձին ընտրողական կարողութիւնն, որով նոքա երբէք կին նախարարներ կամ խորհրդարանի նախագահներ նշանակած չեն, այլ միշտ կոչած են այդ պաշտօնների համար այր մարդիկ, որոնց խորհուրդները լսում էին: Բայց բացառութեանց վերայ կանոն հիմնել չէ կարելի և առհասարակ շատ անկանոն համարելի է այն հանգամանքն, որ կինն ընդունում է իւր վերայ այնպիսի կոչումն, որ իրապէս պատկանում է այր մարդուն, ինչպէս զորօրինակ թագաւորի կոչումն: Բոլորովին արդար նկատողութիւն անում է այս մասին Ուիլլն. այն է, նա ասում է. կնոջ ժառանգութիւնը բացատրուում է միջին դարերի սուրբութիւնից, երբ ամբողջ մի երկիր համարուում էր թագաւորական ընտանիքի մասնաւոր սեպհականութիւն. ուստի և ուր չը կար ժառանգ արական սեռի, այնտեղ կառավարութիւնն իւր վերայ պէտք է առնէր կինը. բայց որքան որ աւելի բացատրուում է պետութեան և գերդաստանի գաղափարն, այնքան հաւանական է, որ շուտով ջնջուի իգական թագաժառանգութեան իրաւունքը:

Եթէ անսահման ազատութեան կուսակիցները իրանց մոլեռանդութեամբ յօգուտ հաւասարութեան մերժում են այր մարդու և կնոջ անհաւասարութիւնը հոգեւոր վերաբերութեամբ, նոյնը նոքա անում են և՛ Ֆիզիքական (մարմնաւոր) վերաբերութեամբ: Մի հայեացքը միայն կնոջ մարմնաւոր կազմուածքի վերայ անտարակոյս ցոյց է տալիս և ոչ միայն այն, որ նա նշանակած չէ այնպիսի աշխատանքի համար, որ պահանջում է տղամարդու Ֆիզիքական ոյժ, այլ և այն, որ նա՝ կինը կոչուած չէ նոյն մտաւոր աշխատանքի և ճգանց համար էլ, որոյ համար նշանակած է այր մարդը: Արդէն դաստիարակութեան և դաստառութեան ժամանակ զպրոցում այս հայեացքն աչքի առաջ ունենալու է և ուր սորա վերայ ուշք չէ դարձնուում, այնտեղ անսպառնառ երևում են սխալ դաստիարակութեան զատ հետեւանքները: Ազատութեան և անպայման հաւասար-

թուփեան տեսակետով անտարակոյս պահանջելի է, որ աղջկունք էլ այնպէս կրթուին, ինչպէս տղայք, որ նրանց աւանդուին ոչ միայն միւսնոյն առարկայք, այլ և որ դպրոցական կարգերի ու վարժութեանց վերաբերմամբ աղջկունք էլ կատարեն միւսնոյն պահանջները: Այս փորձը կատարուեցաւ մի քանի տեղերում՝ Հիւսիսային Ամերիկայում, նա ամեն տեղ շատ տխուր հետեւանքներ ունեցաւ: Այս դէպքում ուշադրութեան առնուած չէր բնութիւնն, սորա կարիքն ու պահանջները: Երբ դպրոցը պահանջում էր աղջիկներից նոյն մտաւոր աշխատանքներն, ինչպէս տղաներից, սորա հետեւանքն եղաւ այն, որ այս դպրոցական պահանջները կատարելիս աղջկունք սկսան տկարանալ, դեղներես էին դառնում, թարշամ և միւսնոյն ժամանակ անընդունակ իրանց ապագայ նշանակութեան համար: Այս պատճառով էլ եկան այն համոզման, որ պէտք է դառնալ դէպի բնութիւնն և ենթարկուիլ նորա պահանջներին և օրէնքներին, որոնք պահանջում են, որ կանոնաւորապէս կրկնուող որոշեալ ժամանակները կնոջ բնութիւնն հանգիստ վայելէ կամ գոնէ ազատ ինի չափազանց ճիգերից:

Վերոյիշեալ խորհրդածութիւնք պէտք է որ նպաստած լինին սարգելու համար այն սխալ հիմունքներն, որոնցից առաջ է գալիս կնոջ ազատութեան վարդապետութիւնը: Այժմ մենք ուշք կը դարձնենք ձերբազատած կնոջ նոյն իսկ անձնաւորութեան վերայ: Ի՞նչ է վաստակում մինչև անգամ ընդունակագոյն կինն նրանից, որ նա անձնատուր է լինում ազատութեան գաղափարին և վարդապետութեան, որ քարոզեցին այր մարգիւլ, որոնք պետութեան և գերդաստանի համար հնարեցին, գտան անօրէնութեան նոր աւետարան, ըստ որում կինն ինքն ըստ ինքեան չի հասաւ ազատութեան արեւը: Նա այդ այր մարգիւլներից ուսաւ և ընդունենք անգամ, որ նա ունի հանճար տարածելու այդ տեսութիւնը, վէպերի և պատմութեանց միջոցով, բայց և այնպէս առաջին զարկն առ այս յամենայն դէպս նա ստացաւ «աղաք ճիգի» կուսակից տղամարդիկներից և այս գործում նա հոգեպէս և մտաւորապէս գայթակղուած, խաբուած կողմն է: Ի՞նչ է վաստակում կինը նրանից, որ անձնատուր է լինում ցնորքների ու երեւակայութեանց, այն նշանակութեան և

մեծութեան վերաբերմամբ, որոյ համար իբրեւ թէ կոչուած է ինքը հասարակական կեանքի մէջ, և նրանից, որ նա գանգատուած է այն ճնշեալ վիճակի դէմ, որոյ մէջ մինչեւ ցայժմ գտնուել է, իբրեւ թէ քաղաքական հասարակութեան անարդարութեամբ: Եւ ի՞նչ է ձեռք բերում նա (չենք կարողանում չափաւորուել այս խնդրի առթիւ), որ անձնատուր է լինում «սղփ» «խոյն»: Նա ունի չէ վատտակում բացի այն, որ նորա վերայ կատարուում է յայտնի ասացուածք թէ «որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեցի», Արուհետեւ ամեն արարած, որ բարձրացնելով իրան կամենում է անցնիլ Ստեղծողի դրած սահմանն, ենթարկուում է խորին անպատուութեան և ընդ նմին ոչ միայն չէ հասնում կեղծ բարձրութեան, դէպի որը ձգտում է, այլ և զրկուում է այն արժանաւորութիւնից էլ, որի համար ինքը նշանակած էր:

Ձերբազատ կինը բոլոր զօրութեամբ ձգտում է ամեն վերաբերութեամբ հաւասարուելու այր մարդու հետ: Նա արհամարհում է սովորական կնոջ սահմանափակ վիճակը. նա երազում է արձակ հասարակական կեանքի մասին և դէպի սա է ուղղում իւր բոլոր զգացմունքներն ու ցանկութիւնները: Բայց այսպէս նա վատտակում է միայն այն, որ տակաւ առ տակաւ դադարում է կին լինել: Բայց և որքան եռանդով էլ չը սլարապէր այր մարդուն պատկան գործով, նա երբէք տղամարդ չէ դառնում: Եւ որովհետեւ նա երբէք չէ կարող բոլորովին մերկանալ իւր կանացի բնութիւնն, ուստի և դառնում է մի տեսակի արուէգ — կէս այր, կէս կին և ոչ մէկը կատարելապէս: Նա թշնամութեամբ է վերաբերուում քրիստոնէական վարդապետութեան ամուսնութեան մասին, կնոջ հնազանդութեան մարդուն: Նա ծաղրում է քրիստոնէական ամուսնութիւնն, իբրեւ մի հնացած հաստատութիւն և արական սեռի վերաբերութեամբ կամենում է անսպասան կերպով ինքնուրոյն լինիլ: Բայց հէնց այսպէս նա ընկնում է կեղծ կախման մէջ այր մարդկերանցից: Ըստ որում երբ նա իւր յարաբերութեանց մէջ տղամարդոց հետ ձերբազատուում է, նա մոռանում է, որ և այր մարդիկ նոյնն անում են նորա վերաբերութեամբ, որովհետեւ որքան էլ նորա չը շողքորթէին կնոջ, որքան էլ չը գովաբանէին նորա գեղեցկութիւնը, հանճարն, նորա

մտաւոր առաւելութիւնը, նախապաշարմունքներից ազատ նորամիտքը, այնու ամենայնիւ նոքա լաւ գիտեն, որ կինն իրանցից գերազանց չէ, այլ ստոր է և չէ կարող ազատ մնալ մի քանի կանացի թուլութիւններից, որ կինը իրանից բարձել է իւր ամենընտիր պաշտպանութեան ղէնքը տղամարդոց ղէմ, այն է քրիստոնէութիւնը ու բնական ամօթխածութիւնն, որ նա՝ կինը պատուել է կանացի երկիւղածութեան և ամաչկոտութեան քօղն, ուստի և աւելի հեշտութեամբ կարող է աւար դառնալ յայտնի տեսակ յարձակմանց, որոնք նա բնաւ աչքի առաջ ունեցած չէր: Գանգատանայ ի՞նչ տեղիք կունենայ նա, եթէ նորա սիրտը, անգիտակցաբար, բորբոքուում է իսկական սիրով ղէպի մի տղամարդ, որին նա տալիս է ամենն, ինչ որ կարող է տալ և որ յետոյ (տղամարդը) վիրաւորական անհաւատարմութեամբ թողնում է նրան և մատնում է նրան խորը խոցուած սրտի մենակութեան: Իսկական ուրբ—այս է՝ ուրբացոյցը նորա կանացի—էն—բառնում է նորա համար պարիշ: Այն ժամանակ նա սկսում է ապաւինել հաւատարմութեան պահանջներին, յշտանում է, գանգատում է՝ հաւատարմութեան խախտման մասին, ուրեմն և իսկապէս ապաստան է որոնում ամուսնութեան պահանջների մէջ: Բայց չէ՞ որ նա ինքը—տարբերուելով իւր այլ քոյրերից, որոնք իրանց թուլութեան զոհ գնացել էին, նա ինքն, ասում ենք, լճառդապէս անձնատուր եղաւ սուտ մարգարէների վարդապետութեան, որոնք ծաղրում են հաւատարմութիւնը սիրոյ մէջ, իբրեւ մի հնացած երեւոյթ, որովհետեւ նոցա կարծիքով սէրը հիմնուում է միայն սրտի ազատ ձգմանց վերայ և կորցնում է ամեն իրաւունք, երբ միայն անհետանում են այդ ձգտումները: Անշուշտ նա, իբրեւ կին, հաստատապէս հաւաստի էր հետեւեալի մէջ. թէ այդ ղէպը ում սէրն երկու կողմից էլ այնպէս զօրեղ է, որ հաւատարմութիւնը պէտք է պահպանուի և անհաւատարմութիւնը բնաւ տեղի չէ կարող ունենալ: Բայց այս հաւաստիութիւնը լոկ կանացի ցնորք էր:

Բայց եթէ մինչև անգամ ձերբազատ կինը չէ ընկնում վերելք նկարագրած դրութեան մէջ (լինում են այնպիսի ձերբազատ կանայք, որոնք այն աստիճան ինքնասէր են ու հպարտ, որ երբեք չեն

զգուժ՝ իսկական սէր)․ այնու ամենայնիւ նորա վերայ կատարուում են «ս Եսայիքացոց աշէ զանն» խօսքերը։ Նորա կեանքում կը հասնին ժամեր ու րոպէներ, երբ նա կզգայ խորին, ներքին թշուառութիւն, անտուն և անապաստան էակի դրութիւնը կզգայ, երբ նա իրան հողից կտրուած բոյսի նման կը տեսնէ, որ ոչ մի տեղ տընկուել և արմատ թողնել չէ կարողանում։ Երբ նա երեւակայած բարձրութիւնից և կեղծ-ազատ կեանքից ի զուր կը ձգտի դէպի խաղաղ և համեստ ընտանեկան կեանքը գերդաստանի գոգում—դէպի մի կեանք, որ կապուած է որոշ պարտականութեանց կատարման և խղճի օրէնքների հետ։

Մենք վերջացնում ենք մեր խորհրդածութիւնքը կնոջ ազատութեան մասին հետևեալ խօսքերով․ կինն, որ ամուսնութեան մէջ հնազանդում է Աստուծոյ պատուիրանին, ամենեին զուրկ չէ ազդեցութիւնից հասարակական կեանքի վերայ։ Նա ունի զօրաւոր-ներգործական ազդեցութիւն եկեղեցու և պետութեան, գրականութեան և արհեստի վերայ։ Բայց այս ազդեցութիւնն անմիջական չէ, այլ անուղիղ—կախ է։ Նա իւր մարդու օգնականն է, նրան հաւատար և մօտը կանգնած, շատ վերաբերութեամբ և զաւաղան միջոցներով նա կարող է նպաստել իւր մարդու ձգտումներին և գործունէութեան։ Ապա—նա կարող է իւր շրջանում՝ ներգործել, որպէսզի հասարակական գործերի վերաբերմամբ, որքան սոքա իրան հասանելի են և հետաքրքրական, լուծեան մէջ կազմուի ընդհանուր կարծիք և դատողութիւն, տիրապետող տրամադրութիւն։ Կնոջ ազդեցութիւնը հասարակական կարծիքի վերայ, թէ լաւ և թէ վատ մտքով, յաճախ եղած է նշանաւոր և յոյժ տարածուած, բայց ամենից առաջ պէտք է մատնացոյց լինել հասարակական կեանքի, եկեղեցու և պետութեան վերայ ունեցած կնոջ ազդեցութեան մի եղանակի վերայ—ազդեցութեան վերայ, որ չունի տղամարդը, զօրութեան վերայ, որ մարդկային հասարակութեան մէջ ամենամեծն է։ Բոլոր ապագայ սերունդն իւր զարգացման առաջին աստիճաններում ամբողջապէս գտանուում է կնոջ ձեռքերում։ Իբրև մայր նա մեծագոյն ազդեցութիւնն ունի հասարակական կեանքի վերայ, այն է մեծ ազդեցութիւն ապագայի վե-

րայ: Կարիք չը կայ բացատրելու թէ ինչո՞ւ պարտական է եկեղեցին քրիստոնեայ մօրը: Կարիք չը կայ կրկնելու, որ եկեղեցու մեծ վարդապետները միայն են այն կրօնական սուղաւորութեանց մասին, որ իրանց մանկութեան ժամանակ ստացել են իրանց մայրերից, սուղաւորութեանց, որոնք պաշտօնը սերմեր են եղած նոյա կեանքում: չը կայ կարիք բացատրելու թէ ինչ է պարտական Հայրենիքը մայրերին, որոնք քնքոյշ սէր են ազգել իրանց զաւակներին դէպի իրանց Հայրենի երկիրը: Բայց Հէնց այն պատճառով, որ կինն այգալիսի մեծ ազգեցութիւն ունի ապագայ սերնդի վերայ, նորա կրթութեան մէջ կրօնական և ազգային տարրը պէտք է լինեն Հիմնական տարրեր: Մայրենի լեզու, հայրենի բանաստեղծական գրականութիւն և նորա պատմութիւնը աւելի մեծ ինքն ինքն հայրենասիրական տպագրութիւն համար, քան անօգուտ շատ լատինական օրհներգերը:

Հնարաւոր տարակուսութեանց առաջն առնելու համար աւելացնենք մի նկատողութիւն ևս: Մենք բնաւ չենք զինաւորուում այն ձգտմանց դէմ, որոց նպատակն է տալ կին մարդուն աւելի ազատ ասպարէզ իւր իսկական ընդունակութիւնքն և իրաւունքները գործադրելու, որոնք իրաւամբ նրան պատկանում են: Մի քանի երկրորդական պարագմունքներ, որոնք սկզբում կատարում էին տղամարդիկ, մեր ժամանակում կատարում են և կանայք, այստեղ մենք հասկանում ենք աշխատանքներն, որոնք ոչ միայն գործարաններում այլ և տպարաններում և հեռագրատներում և այլն են կատարուում: Այսպիսի նորաձեւութիւնը կարելի է վերաբերել կնոջ ազատութեան քաղաքական կողմին: Մեզ վատ հասկացած կը լինի նա, ում մեզ կը համարէր այս և սորա նման նորաձեւութեանց հակառակորդ: Այսպիսի աշխատանքներ, որոնք կանայք կարող են կատարել նոյն յաջողութեամբ, ինչպէս և տղամարդիկ, պէտք է իրաւամբ թող տրուի նրանց կատարելու: Բայց յամենայն դէպս այգալիսի կանացի աշխատանքը սակաւ ցանկալի է, տղամարդոց հետ մրցութիւն անելու այգեղանակը պարունակում է իւր մէջ մի բան, որ կարծես անյարմար է կնոջ բնաւորութեան: Այն ինչ այգալիսի մրցութիւնն առաջ է գալիս ապրուստի միջոց

գտնելու համար և հիմնուած է ժամանակակից հասարակութեան նեղ լիճակի վերայ, այն էլ մասամբ այն հանգամանքից է առաջ գալիս, որ շատ կանայք ներկայումս մնում են առանց ամուսնութեան և մասամբ էլ նրանից, որ պատահում են այնպիսի ամուսնութիւնք, ուր տղամարդն միայն իւր աշխատանքով անձեռնհաս է լինում՝ պահպանել իւր ընտանիքն. ուստի և կինն էլ ափսոսած է որոնելու իւր համար վստասկի միջոց և զժբազդաբար յաճախ անից դուրսը: Բոլոր այս հանգամանքները կապ ունին առհասարակ ներկայ հասարակութեան թշուառ լիճակի հետ, որ առիթ տուեց ներկայ ժամանակի ընկերական առեղծուածի (աշխատատեղների-մշակների խնդիր) և կազմում են «գայութեան խնդրի» երեւոյթներից մէկը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍԷՐ.

Երբ ամուսնութեամբ կազմուում է գերդաստան, սորա հետ միասին ծագում է և ընտանեկան կեանքն և գերդաստանականութեան զգացմունքն, որ ոգեւորում է և միացնում է այս փոքրիկ ամբողջութեան՝ այս ընտանեկան շրջանի անդամներին և արտայայտուում է ընտանեկան սիրոյ մէջ, նոյնպէս գերդաստանի յարաբերութեանց մէջ այլ հասարակական շրջանների հետ: Գերդաստանական սէր ասելով մենք հասկանում ենք ոչ միայն ընտանիքի անդամաց փոխադարձ սէրն, այն է ծնողաց սէրն առ իրանց զաւակներն և ընդ հակառակն, եղբարց և քոյրերի սէրն առ միմեանս և այլն, այլ և իւրաքանչիւր անդամի ընդհանուր սէրն առ այդ ամբողջութիւնն, այդ ընտանիքն, որոց հետ ընդարձակ մտքով միացնելու է և այլ այլ մերձաւորներին ու ազգականներին: Այդ սէրն ընդհանուր սէրն է դէպի ընտանեկան օճախն, սորա բոլոր տխուր և ուրախ պարագաներով, դէպի որոշ ընտանեկան կարգն և կենցաղավարութեան եղանակը, դէպի այն ընտանեկան սովորութիւնքն ու բարքն, դէպի այն ընտանեկան ժողովներն որոշեալ ժամերին, դէպի այն փոքրիկ ընտանեկան տօնախմբութիւնք, որոնց կենդրոնը քրիստոնէական

գերդաստաններում՝ կազմում է ամեն տարի կրկնուող Քրիստոսի շննդեան և Յայտնութեան տօնն, այս մանկական տօնը՝ բայց սա և հասակաւորների տօն էլ է, որոնք որքան հասակն առնում են այնքան աւելի ուրախութիւն են զգում այդ տօնին, իւրաքանչիւր գերդաստանում այս տօնն իւր առանձնութիւնքն ունի և նորա պատկերը խորը տպաւորութեամբ է յիշողութեան մէջ:

Ընտանեկան կանոնաւոր կեանքն և իսկական ընտանեկան սէրը կարող են երեւան գալ միայն այն ժամանակ, երբ կայ պատշաճաւոր յարաբերութիւն հեղինակութեան և յարգանաց մէջ, իշխանութեան և հնազանդութեան մէջ: Ուր չը կայ հեղինակութիւն, չը կայ կամք, որ կարգաւորէ ամբողջն, ուր տան մէջ չը կայ կարգ, այլ կայ միայն կեղծ անհատական ազատութիւն, ուր ընտանիքի անդամներից իւրաքանչիւրն անում է այն, ինչ որ իրան հաճոյ է, վարում է ըստ իւր կամաց և միայն իւր բաւականութեանց ետեւիցն է. կամ ուր երեւան են եկած ազատութեան սխալ գաղափարներն, ուր զաւակներն ու ծառաներն ձերբազատներ են և հաւասար են իրանց կարծում ծնողաց և տէրերի հետ — այնտեղ և ընտանեկան կեանքը ի հիմանց խախտուած է: Հակառակ ծայրահեղութիւն լինում է, երբ հօր կամ մօր հեղինակութիւնը գերդաստանում այն աստիճանի տիրապետող է լինում, որ նորա մէջ սաւառնում է երկիւղի ոգին, ամբողջ գերդաստանի վերայ մի բռն է ծանրացած և այնտեղ կարգը ծանրութիւն է և նեղութիւն: Իրերի բուն կանոնաւոր վիճակն այն է, երբ հեղինակութիւնն իշխում է միացած սիրոյ հետ, ուստի և ունենում է արդիւնաւոր, փրկարար ազգեցութիւն, այնպէս որ իւրաքանչիւր անհատականութիւն զգում է, որ իւր իրաւունքները բոլոր առանձնայատկութեամբ ճանաչուած են և ինքն կատարեալ ազատութիւն է վայելում զարգանալու համար որոշ սահմանների մէջ, ուր հնազանդութիւնը ծնողաց (կամ տէրերի) կամքին անխրդելի կերպով կապուած է պատուոյ և յարգանաց վերայ հիմնուած հաւատարմութեան հետ, կամ այլ խօսքերով ուր պահպանուած է կանոնաւոր յարաբերութիւնն իշխանութեան և հնազանդութեան գերդաստանի անդամների մէջ, պարտականու-

թեան և սիրոյ անբաւոյնի կապերով և ուր այս իբրև բնական և հասկանալի մի երևոյթ է համարուում:

Բայց իսկական ընտանեկան կեանքն և սէրը հիմնուում է ոչ թէ գերզատանական շրջանի մէջ պահպանուող հեղինակութեան և յարգանաց հաւասարակշռութեան վերայ միայն, այլ և նորա վերայ, որ այդ ընտանեկան ոգին ինքն էլ հնազանդութեան և յարգանաց պատշաճաւոր յարաբերութեան մէջ է մտնում՝ այլ շրջանների հետ, այն է, հասարակական զօրութեանց հետ, որոնք գերզատանից բարձր են: Անտարակոյս ընտանիքն սկիզբն է և աղբիւրը բոլոր բարոյական աշխարհի, հիմն այլ հասարակական կազմակերպութեանց: Բայց ընտանիքը չը պէտք է մեկնի, միայնանայ, նա բոլոր հասարակական շրջաններից ոչ միայն պաշտպանութիւն և հովանաւորութիւն պիտի գտնէ, այլ և սնունդ և բեղմնաւորութիւն: Այնչ մարդկային նորա համար օտար չը պիտի լինի: Առանց կենդանի համակրութեան առ ընդհանուրն ընտանեկան կեանքն և ոգին դառնում է անհոգի և անսիրտ անարգաբութիւն և ինքնասիրութիւն: Ընտանեկան միայնութիւնն և ինքնասիրութիւնը մեղքի արդիւնք է, որ կորստաբեր է մարդկութեան կեանքի համար: Պատմութիւնը պատմում է մեզ թագաւորների և կառավարիչների մասին, որոնք իրանց ընտանեկան շահերին զոհ են բերել պետական շահերն և ընտանեկան վեճերի պատճառով թշուառութեան մէջ են գցել ազգերին և սրանց կորստաբեր պատերազմների մէջ խառնել, այս հանգամանքը նկարագրել է Նէկսպիրն իւր պատմական բանագործութեանց մէջ: Պատմութիւնը պատմում է և ազնուական դասի գերզատանական ինքնասիրութեան մասին, որ ամբողջ պետութիւնը կորստեան մատնած է: Նա պատմում է պապերի և այլ եկեղեցական կառավարիչների նեպոտութեան (եղբօր կամ քեռորդույ իշխանութիւն եկեղեցական գործերում) մասին: Այլ միայն ընդհանուր պատմութիւնն, այլ և առօրեայ կեանքն էլ կարող է ընտանեկան ինքնասիրութեան բազմաթիւ օրինակներ ցոյց տալ: Մենք խօսում ենք ոչ միայն իրաւունքի և արդարութեան աշխարայ բռնաբարութեան և խանգարման մասին, երբ զորօրինակ մի գերզատան անարդար դատաստանա-

կան դատաւարութեամբ աշխատում է մի այլ գերդատանի կայքն իրան սեպհականել—այս ակներե խախտումն է Աստուծոյ պատուիրանին՝ «Մի ցանկանար տան ընկերի քո» և այլն։ Մենք հանդէս ենք բերում այն անարգարութիւնն, երբ ընտանեկան սէրն մեկուսանում է հասարակական կեանքի շահերից և այսպէս յանցաւոր է գտանուում նշանաւոր պարտականութիւնք չը կատարելում։ Կան մարդիկ որոնք վարում են ընտիր օրինակելի ընտանեկան կեանք. բայց այնպէս գրաւուում են նորանով, որ նոցա մէջ գրեթէ ամենեւին չենք նկատում հակամիտութիւն և սէր դէպի իրանց հայրենեաց և հասարակութեան շահերը. այսպիսի գերդատանական կեանքն ամենեւին օրինակելի չէ։ Այն պաշտօնական անձն, որ թէև համարուում է գերդատանի լաւ և հոգատար հայր, բայց ընդ նմին անճիշդ է իւր պաշտօնաւարութեան մէջ կամ կատարում է իւր պաշտօնը տուանց եռանդի և անտարբերութեամբ, ցոյց է տալիս իւր մէջ բարոյականութեան պակասութիւն. խակապէս այսպիսի մարդը և ոչ իսկ գերդատանի լաւ հայր է, որովհետև իւր թոյլ և անտարբեր պաշտօնաւարութեամբ և բարձր ձգտումների պակասութեամբ վատ օրինակ է ցոյց տալիս իւր գերդատանին։ Յայտնի բան է միւս կողմանէ կարելի է ասել, որ կան այնպիսի անձինք, որոնք այնպէս գրաւուում են հասարակական կեանքով, որ սորա համար անտես են առնում և բարձի թողի անում ընտանեկան կեանքը։ Այս դէպքում իւրաքանչիւր մարդու խնդիրն ու պարտքն է հետևեալը. «Պէտք է միշտ ջանալ կեանքի ամեն շրջաններում արգարութեան պահանջները կատարելու»։

Ամենից առաջ ընտանեկան սէրը պէտք է հնազանդի Աստուծոյ արքայութեան, որ մարդկային կեանքի բարձրագոյն և վերջին նպատակն է։ Երկրիս վերայ Աստուծոյ արքայութեան տարածման և հոգևոր իշխանութեան համար ընտանիքն ամենէական միջոցներից մէկն է։ Երբ քրիստոնէութիւնն աշխարհ եկաւ, նա շատ աներում խանգարեց ընտանեկան խաղաղութիւնը, նոյն ներգործութիւնը նա անում է և այժմ, երբ այն գերդատաններում, որոնց դեռ քրիստոնէութիւնը կամ բնաւ չէ հասել կամ նոցա մէջ տիրապետում է արտաքին ըստ սովորութեան միայն քրիս-

տօնէութիւն, ու այդպիսի ընտանիքներում մի քանի անգամներ
 րի մէջ զարթում է կենդանի հաւատ. և այժմն էլ նոր կեանքն
 ի Քրիստոս և նոր դաւանութիւնն Քրիստոսի մօցնում է գերդաս-
 տանի մէջ աղմուկ և երկառակութիւն: Այսպիսի դէպքում կա-
 տարութեան Քրիստոսի խօսքերը թէ «Մի համարիք եթէ եկի ար-
 կանել խաղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել խաղաղութիւն,
 այլ սուր: Քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ, և զուսար ի մօրէ
 իւրմէ և զհարսն ի սկեսրէ իւրմէ: Եւ թշնամիք առն ընտանիք
 իւր: Ար սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ
 արժանի, և որ սիրէ զուսար կամ զզուսար առաւել քան զիս՝
 չէ ինձ արժանի» (Մատ. Ժ. 34—37), թէև սրանից առաջ են գա-
 լիս դժուարութիւնք և ծանր յարաբերութիւնք, թէև լինում են
 յաճախ սխալներ գերդաստանի այն անդամների կողմից, որոնք
 սթափուել են քրիստոնէութեամբ, որոնք երբեմն անընտրողաբար
 արտայայտում են իրանց քրիստոնէութիւնն և իրանց բոլոր վար-
 քով ցոյց են տալիս անխորձութիւն. բայց և այնպէս այն հան-
 գամներն, որ գերդաստանի «~~աշխարհային~~» կեանքը խան-
 գարում է Աւետարանով, բոլորովին կանոնաւոր բնական երևոյթ
 է և համապատասխան Աստուծոյ տնօրէնութեան: Բոլորովին անար-
 դար են այս հանգամանքի վերաբերմամբ նոքա, ոյք կամենում են
 արտաքսել ընտանիքից քրիստոնէութիւնն Քրիստոսի խաղաղու-
 թեամբ հանդերձ և կամ իրանց նրանից հեռու պահել յարգե-
 լով ընտանեկան խաղաղութիւնն և միաբանութիւնը, կարծես բո-
 լոր բարիքը սորա մէջ է: Խաղաղութեան այսպիսի խանգարումն
 ճգնաժամ է, որ Տէրն ինքը յարուցանում է գերդաստանի մէջ այն
 նպատակով, որ հոգւոյ մէջ թափանցի մեծ խնդիրը՝ թէ ի՞նչ է ճշմար-
 տութիւնը, ի՞նչ պէտք է անեմ, որ երջանիկ լինեմ և որպէսզի տան
 բոլոր բնակիչք խորհեն թէ յիշաւ ինքը կարող է խաղաղութիւն
 բերել թէ իւրաքանչիւր անդամին և թէ ամբողջ գերդաստանին:

ԾՆՈՂՆԵՐ ԵՒ ԶԱՆԱԿՈՒՆԲ: Ծնողների պարտականութիւնն է
 դաստիարակել իրանց զաւակաց, իսկ զաւակաց իրաւունքն է—
 դաստիարակութիւն ստանալ: Արովհետեւ նորածին մանուկն աշխարհ
 է գալիս ոչ միայն իբրեւ անդամ գերդաստանի, այլ և իբրեւ ապա-

գայ անդամ՝ պետութեան և եկեղեցւոյ, մարգկային թագաւորութեան և Աստուծոյ արքայութեան, ուստի և նորա դաստիարակութիւնն անշուշտ որոշեալ սահմաններում պէտք է ենթարկուի պետութեան և եկեղեցու հսկողութեան, նա չը պէտք է յանձնուի ծնողաց կամայականութեան ամենայն կողմանէ։ Չաւակները ծնողաց ստրուկները չեն։ Բայց յայտնի բան է ծնողք ունին իրաւունք և պարտական են ստանձնելու զաւակաց հոգատարութեան գլխաւոր բաժինը։ Քրիստոնէական դաստիարակութիւնը պէտք է կատարուի մկրտութեան հիման վերայ և նորա խնդիրն ու նպատակը հետեւեալն է. «Մանկան վերայ պիտի կատարուի Քրիստոսի կամքը, նա պիտի առաջնորդուի դէպի այն, որ հասնի յաւիտենական կենաց, որոյ համար կոչուած է նա մկրտութեամբ, բայց այս խնդիրը բնաւ արգելք չէ, այլ և պահանջում է, որ մանուկը դաստիարակուի և բնական կեանքի համար երկրիս վերայ։ Քրիստոնէական դաստիարակութիւնը, գլխաւորապէս, նրապատակ ունի կրթել մանկանց կամքը, զնել նոցա բնաւորութեան հիմքը, որ անշուշտ հակառակ է մի քանի ծնողաց կարծքին, որոնք դաստիարակութեան գլխաւոր գործը համարում են զարգացնել մանկանց մտաւոր ընդունակութիւնքը միայն և տաղանդները։ Մանուկները պէտք է պատուոյ և հնազանդութեան հոգւով, յարգանաց և սիրոյ հոգւով, հաւատով յԱստուած և առ Փրկիչն իւրեանց դաստիարակուին և այս նպատակին պիտի ենթարկուի նոցա հոգւոր, մտաւոր և մարմնաւոր ընդունակութեանց զարգացումն։ Ճշմարիտ դաստիարակութիւնն աշխատում է զգուշանալութէ չափազանց խտտութիւնից և թէ աւելորդ քաղցրութիւնից, որ թուլութիւն է։ Շատերն հանգէս են բերում տարբերութիւնը սերունդների, որոնք դաստիարակուել են ծեծով և այլ սերունդների, որոնք դաստիարակուել են գգուանքով ու քաղցրութեամբ— և կարելի էր ապացուցանել, որ խտտութեամբ պատիժների ու գանի օգնութեամբ, օրէնքի խիստ պատժով դաստիարակուած սերունդներն աւելի լաւ պոռուղներ են տուել քան գրգուանքով դաստիարակուածներն, որոնք աճել են անօրէնութեան, կամայականութեան և փախկութեան մէջ։ Բայց որքան որ դաս-

տիարակութիւնը կը կատարուի Քրիստոսի ոգւով, այնքան նա աւելի
իւր մէջ կը միացնէ այդ երկու տարրները՝ խստութիւնն ու սէրը,
հեղինակութիւնն ու ազատութիւնը, օրէնքն ու Աւետարանը:

«Առաքեալը պահանջում է, որ մանկունք դաստիարակուին Տիրոջ
խրատով և ուսմամբ» (Եփես. գ. 4), բայց այս պահանջի հետ միաց-
նում է և զգուշացումն, որ հարք չը զայրացնեն որդոց: Անտա-
րայս դաստիարակութիւնը չէ կարող առանց խստութեան կատա-
րուիլ, որովհետեւ մարգոս կամքը բարեաց՝ այդ ընդհանուր—պար-
տաւորական սկզբունքի համար կրթելիս, հարկ է խորտակել կամայա-
կանութիւնը: Սորա համար գլխաւոր միջոցն է վարժել մանկանց աշ-
խատասիրութեան և կարգի մէջ, ճշգրտութեան և կանոնաւորութեան
մէջ, կենցաղաւարութեան ամեն եղանակով: Պատիժներից խուս-
փել անհնարին է, բայց պատժողը սէրը պիտի լինի և հարկ է խոր-
շել կրքից, կամայականութիւնից և անարդարութիւնից, որպէսզի
մանուկները չը զայրանան և չը վշտանան: Ըստ սրում՝ մանուկներն
ի բնէ չափազանց ընդունակ են զանազանելու իրանց վերաբերու-
թեամբ արդար վարմունքն անտրդարից, կամայականից: Բայց խն-
տութեան և պատիժների ժամանակ էլ բարձրագոյն նպատակը պի-
տի լինի ոչ թէ այն, որ մանուկներին տիրէ երկիւղի ոգին, այլ ճշ-
մարիտ յարգանաց և սիրոյ հոգին, որ նորա բարի գործեն, որովհե-
տեւ բարին նրանց ուրախացնում է և զգուանքը դէպի չարը և մա-
նաւանդ դէպի ամեն տեսակ անարդարութիւն, կեղտոտութիւն և
անարբութիւն նոցա մէջ բնական դառնայ: Բայց երբէք պէտք չէ
մանկանց մէջ զարգացնել յարգանաց զգացմունք դէպի իրանց ծը-
նողները միայն, այլ և դէպի ամենն, որ արժանի է յարգանաց,
որքան այս հասանելի կը լինի նոցա գիտակցական կարողութեան:
Եթէ ի միջի այլոց ներկայումս լսուում են գանգատներ, թէ երի-
տատարգ սերունդը սակաւ յարգանք է ցոյց տալիս մեծերին՝ հասա-
կաւորներին, դա ծագում է ըստ մեծի մասին նրանից, որ հէնց ծը-
նողներն և առհասարակ ներկայ սերնդի հատակաւորներն իրանք
շատ սակաւ յարգանք են զգում դէպի ամենն, ինչ որ արժանի է
յարգանաց, այլ ընդհակառակն առաւելապէս ներշնչուած են քն-
նադատական և աւերիչ ուղղութեան ոգւով: Այս դէպքում օրի-

նակը զօրաւոր ազդեցութիւն ունի: Եթէ դուք ցանկանում էք ձեր զաւակներին դաստիարակել յարգանաց և մեծարանաց զգացմամբ, գէպի ամենն, որ ինչ մեծ է և գեղեցիկ կեանքի մէջ, իրանքդ էլ ունեցէ՛ք նոյն յարգանքն ու մեծարանքն և ձեր զաւակներին մի ցոյց տուէ՛ք ամենօրեայ օրինակ արժանի յանդիմանութեան և մեծամոռութեան, որ ոչինչով գոհ չէ և չունի իւր համար մի գաղափար: Վարակիչ ախտն մանկանց հաղորդուած է աւելի շուտ, քան երեւակայում են: Այն ժամանակ բոյսերի վերայ երևում է այն մեղրաքիրան, որ արգելք է լինում նոցա աճեցողութեան:

Մանկան դաստիարակութիւնը կրօնական ոգւով և կրօնական զգացման զարգացումն մարդկային սկզբնական հասակում ճշդ պարտականութիւնն է: Ինչպէ՞ս որ մայրը տալիս է մանկան առաջին մարմնաւոր սնունդն իւր ստինքից, նոյնպէ՞ս նա պիտի տայ մանկան և սորա առաջին հոգեւոր սնունդն իւր սեպհական սրտից: Արքան որ ցաւալի է, երբ մայրն անձամբ չէ կարողանում կերակրել իւր մանկան, աւելի ևս ցաւալի պիտի լինի, եթէ նա անկարող է նրան կերակրել հոգեւոր կողմից, այլ սորա համար էլ ստիպուած է վարձել դայեակ և կամ բոլորովին առանց սննդի թողնել նրան: Մայրը պէտք է ուսուցանէ մանկան աղօթել և առաջնորդէ առ Փրկիչն, նա պէտք է հաղորդէ աւետարանի պատմութեան առաջին տարրներն, որոնք շատ դիւրմբօնելի և հասկանալի են մանկական մտքի համար: Հետեւեալ շրջանում ուսուցումն պէտք է ունենայ աւելի կենսոսոյց և հրահանգիչ բնասրութիւն, բառիս ճիշդ նշանակութեամբ—հօր թէ դպրոցի միջնորդութեամբ կը կատարուի այս ուսուցումն: Բայց առհասարակ կանոնն այս պիտի լինի, պէտք է զգոյշ լինել ամենօրեայ կեանքում չափազանց շատ բարոյական խորասներ հաղորդելից, յոյժ շատ խօսելից կրօնի և քրիստոնէութեան վերայ, այս բոլորովին իրական չի լինիլ իսկ երբեմն և վրնասակար կը լինի: Երկարաբան ճառից աւելի ներգործում է մանկանց վերայ, երբ տեսնում են հօր և մօր մէջ հաւատի ոյժն, եթէ նոքա տեսնում են թէ ինչպէ՞ս իրանց ծնողներն ամենօրեայ պարապմանց մէջ, կեանքի ամեն փոփոխական հանգամանքներում գտնում են իրանց համար նեցուկ և ապաստանարան, միակ միխթարութիւն

միայն Աւետարանի մէջ: Ամեն երկար խրատներից ու յորդորներից աւելի զօրաւոր և ազգու է լինում յարմար գէպքում արտայայտած մի խոստովանութիւնն ու դաւանութիւնն Աստուծոյ, որ գուցէ և մի քանի խօսքով է միայն արտայայտած: Բայց առաջ է եկած անհրաժեշտութիւնից, կեանքից և կեանքի սկզբնական դժուրութեամբ է ներշնչած: Գովելի է վարժել երիտասարդներին, որ նոքա կանոնաւորապէս այցելեն եկեղեցին. բայց այս գէպքում պէտք է զգուշանալ, որ այդ նորան մի ատելի ստիպմունք չերեւի:

Մանկան հոգեւոր կեանքի և նորա սրտի վերայ հոգատարութեան հետ միասին, հոգս քաշելու է և նորա մարմնաւոր բարեկեցութեան վերայ: Մարմնոյ առողջութիւնը նեցուկ է հոգեւոր կեանքի կանոնաւոր զարգացման համար. միակողմանի-հոգեպաշտական դաստիարակութիւնից առաջանում է ոչ միայն թոյլ մարմին, այլ և թոյլ և հիւանդոտ հոգի: Արքան էլ և միակողմանի են Առնոյի և սորա նրմանների դաստիարակութեան եղանակները. բայց էլի նոքա մեծ արդիւնք են ցոյց տուած նրանով, որ ուշք են դարձրած այն հոգատարութեան վերայ, որ դաստիարակութեան ժամանակ հարկ է դարձնել մարդու մարմնաւոր կողմի վերայ էլ, այսպիսիք են դժօրինակ հոգացողութիւնը սննդարար կերակրի, մարմնոյ մարդութեան, լողանալու վերայ, արտաքին զգացմանց զարգացման վերայ և այլն:

Մենք տնկում ենք և ջուր տալիս իսկ Աստուծո՞ւ աճեցնում է (Առ. Կորնթ. գ. 7): Այս խօսքերը կարելի է վերաբերել և դաստիարակութեան գործին: Ար անհնարին է չտիպողանց մեծ յոյս դնել դաստիարակութեան վերայ — այդ ապացուցանուում է այն փորձով, որ մի և նոյն ծնողաց և մի և նոյն դաստիարակութիւնը ստացած մանուկները կարող են ապագայում բոլորովին միմեանցից տարբեր լինել, այս փորձը մենք տեսնում ենք առաջին մարդկային ամուսնական զոյգի կեանքում Կայէնի և Աբէլի մէջ: Մանուկներից մէկը կարող է յաջողակ լինել և բարի մարդ դառնալ, այն ինչ միւսն անցաջող է լինում և չար մարդ է դուրս գալիս: Այս հանգամանքը ցոյց է տալիս մեզ ազատութեան գաղտնիքն և այն խորհրդածութեան է հասցնում, որ իւրաքանչիւր անհատ

ինքն իրանից անում է, առաջացնում այն, ինչ որ ինքն է: Միւս կողմից մենք չենք կարող և չը պիտի մերժենք այն ճշմարտութիւնն, որ բնաւորութեան զարգացումն պայմանաւորուած է արտաքին ազդեցութիւններով, և որ շատ մանուկներ կորել են վատ դաստիարակութեան պատճառով, թէ և մատամբ նոցա բազմի ու վիճակի յանցանքն իրանց վերայ է: Այս մասին ծնողաց սրբազան պարտականութիւնն է անել այն, ինչ որ կարող են, որովհետեւ այս գործում նոքա պատասխանատու են և պէտք է պատասխան տան Աստուծոյ առաջ: Մանկանց դաստիարակութեան գործում գլխաւոր դժուարութիւնն այն է, որ յաջողութիւնը կախուած չէ միայն ուսումից և խրատներից, թէ և սոքա էլ անհրաժեշտ են, այլ ծնողաց անձնական կեանքից, անձնաւորութեան այն զօրութիւնից, որ նոքա կարողանում են արտայայտել իրանց զաւակների վերաբերմամբ: Ուստի և շատ դէպքերում ծնողները խոնարհութեամբ խոստովանում են, որ չեն հասած հասունութեան իրանց պարտականարութեան համար, որովհետեւ հէնց նոքա իրանք դեռ անկատար անձնաւորութիւնք են: Ինչպէս մենք հեղութեամբ խոնարհում ենք, երբ մեր զաւակների մէջ մեր առաջ ներկայանում են մեր թերութիւնքը:— Ուստի և նոքա, որոնք կոչուած են դաստիարակ լինելու անդադար պէտք է դաստիարակեն իրանք իրանց էլ և ստանան կրթութիւն Աստուծոյ, Նորա բանի միջնորդութեամբ և առաջնորդութիւն, Նորա պատիժների և մխիթարութեանց միջնորդութեամբ:

Դաստիարակութեան նպատակն է զաւակներին տալս վիճակից հասցնել հասունութեան վիճակն և երբ հասնում է այս հասունութեան վիճակն, երբ զաւակները մինչև անգամ իրանք դառնում են ընտանիքի հայրեր, այն ժամանակ զադարում է հնազանդութեան յարաբերութիւնն, որոյ մէջ գտանուում են զաւակները ծնողաց վերաբերմամբ: Բայց եթէ և զադարում է հնազանդութեան յարաբերութիւնը, չը պէտք է զադարի յարգանաց և մեծարանաց յարաբերութիւնը, սա պէտք է շարունակուի ամբողջ կեանքը: Եւ թեպէտ զադարում է ծնողաց իշխողական յարաբերութիւնը, բայց չը պրտք է զադարի նոցա սէրը դէպի զաւակները: Այստեղ

էլ կեանքը մեզ յաճախ ցաւալի հակապատկերն է ցոյց տալիս նորա ինչ որ պիտի լինէր: Հասակաւոր զաւակներն, որոնք գեր-գաստանի հայր են դարձած, ցոյց են տալիս իրանց զաւաւմեալ ծը-նողներին ոչ-յարգանք և ապերախտութիւն: Աիր արքայի վիճակը (Հեկապիլի յայտնի ողբերգութեան մէջ) կրկնուում է և՛ քաղաքացի և՛ գիւղացի ընտանեաց մէջ էլ, ուր զաւաւմեալ ծնողներն իրանց կալուածքները յանձնում են զաւակներին և փոխարէն շնորհակալութեան այս վարմունքի համար զաւակները վարուում են նոցա հետ իբրև օտար հացակերների հետ, որոնք իրանց համար բեռն են: Ամեն ժամանակ և հասարակութեան ամեն դասակարգերում մենք հանդիպում ենք ծերունիների, որոնք Աիր թագաւորի մէջ տեսնում են իրանց անձնի և իրանց վիճակի պատկերը: Միւս կողմից կեանքի մէջ մենք տեսնում ենք և այնպիսի ծնողներ, որոնք իրանց հեղինակութիւնը տարածում են պատշաճաւոր սահմաններից դուրս էլ: Այսպէս էլ զորօրինակ լինում են մայրեր, որոնք բնաւ թող չեն տալիս իրանց զաւակաց ազատութիւն վայելելու, թէև սոքա կատարելահասակ ևս լինէին: Հախանձոտութեամբ նայում են իրանց որդոց ամուսնութեան վերայ, որովհետև իրանք այլ ևս չեն կարողանում նոցա համակրութեան առարկայ լինել նախկին չափով: Ախնում են սկեսուրների, որոնք անընդհատ յանդիմանութիւններով և քննադատութեամբ իրանց հարսերին անկատարելահասակ մանկանց շարքն են դասում և խառնուում են նոցա ընտանեկան գործերի մէջ: Այս վերաբերութեամբ էլ պէտք է պահպանել պատշաճաւոր սահմանն և յիշել, որ սէրն ոչ որին չէ խնայում և որ հասակաւոր սերունդը մատաղ սերնդի վերաբերմամբ յաճախ յիշելու է ա. Յովհաննէս Մկրտչի խօսքերը՝ թէ «Նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ» (Յովհ. Գ. 30):

Մնողաց և զաւակաց յարաբերութեանց մասին խորհրդածելով, մենք չենք մոռանում, որ լինում են և ամուլ ամուսնութիւնք: Խորացւեացող մէջ մեծ թշուառութիւն և նախատինք էր համարուում եթէ կինը չէր ծնում զաւակներ: Ուտոի և արդար եղիսաբէթն իւր ծերութեան ժամանակ յղիանալով ասում է. Զինչ

գործ գործեաց ընդ իս Տէր յառաջս՝ յորա հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ (Ղուկ. ա. 25)։ Այստեղ ամուսնութիւնն, արտաքոյ իւր նշանակութեան ունիւ և մի այլ նպատակայն է՝ նա նշանակուում է՝ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը բաղմացնելու համար՝ որին իւրաքանչիւր ամուսնական զոյգ պիտի տար իւր աւանդն, ընդ նմին և ամուսիններն իրանց զաւակների միջնորդութեամբ կարծես պարտական էին շարունակելու իւրեանց գոյութիւնն երկրիս վերայ։ Առաջի համաձայնութեամբ և մինչև իսկ նորա պահանջով Աբրահամը, հաւատացելոց հայրը՝ առնում է հարձ, որ սրանից սերունդ ունենայ։ Ընդ հակառակն քրիստոնէութեան մէջ ճանաչուում է անձնաւորութեան յաւիտենական արժանիքն և ամուսնութիւնն, ինչպէս և ամուսնական բոլոր կենակցութիւնն ինքն ըստ ինքեան ունին կշիռ, առանց զաւակաց էլ։ Բայց այնու ամենայնիւ չէ կարելի ժխտել, որ ներկայումս էլ անզաւակութիւնը կարող է տխուր զրկանք համարուել, որ հարկ է տանել իբրեւ բաղդի հարուած։ Այսպիսի դէպքում ծնողները չունին տեսանելի պտուղ, սիրոյ կենդանի գրաւական, որպիսիք համարուում են սովորաբար զաւակունք. նոքա չեն տեսնում իրանց կեանքի կրկնապատկումն նոր կեանքի մէջ, որ աճում է իրանց աչքի առաջ։ Նոքա զրկուում են իրանց կեանքի շարունակութիւնից երկրիս վերայ։ Աւտի և անզաւակ ամուսիններն յաճախ որդեգրում են որբուկներին և ընկէցիկ ներին և հոգում են նոցա վերայ իբրեւ իրանց զաւակաց վերայ։

Ամուսնականութեանց մասին արած խորհրդածութեանց վերայ մենք կաւերացնենք հարց՝ թէ արդեօք կարելի է հաստատել, որ զաւակներ ունենալն երջանկութիւն է։ Շատերն այս հարցին պատասխանում են դրականապէս. նոքա մինչև իսկ աւերացնում են, որ որբան տան մէջ շատ են զաւակներ, այնքան աւելի մեծ է երջանկութիւնն։ Այս հայեացքը յայտնի բան է կարող է իրան յենակէտ ունենալ հին ուխտի հայեցումաւ, բայց միևնոյն ժամանակ բարձի թողի են անում այն հանգամանքն, որ այն յարաբերութիւնը, որոնք ունէին նշանակութիւն խորայնի և Աստուծոյ նախապատրաստական տնօրէնութեան համար, չէ կարելի վերաբերել առանց խորհր-

դաժութեան և այլ ազգերին: Եթէ զաւակների բազմութիւնն անպայման կերպով երջանկութիւն լինէր, աղքատ սինլքորի ամուսնութիւնք անշուշտ կը լինէին ամեներջանիկները: Բայց երբ նայենք այդ ամուսնութեանց վերայ, իրանց բազմութիւ հիւանդոտ և քաղցած զաւակներով, որոնց ծնողներն ոչ կերակրել կարողանում են և ոչ էլ դաստիարակել և որոնք աւելի և աւելի առուարացնում են չքաւոր բնակչաց թիւը. կղզանք կարեւորութիւն սահմանափակելու այդ երջանկութեան անպայման նշանակութիւնն: Այս դէպքում երջանկութեան պայմանն է, որ անպատճառ լինի տուն, լինի ընտանեկան օճախ, ուր զաւակները կարողանային գտնել սնունդ և զգեստ, ու դաստիարակուէին Տիրոջ ուսմամբ և խրատով: Անապատան, քաղցած զաւակների բազմութիւնը դժուար է ամուսնութեան երջանկութիւն համարել: Մինչև անգամ թէ գուց թող լինի ընտանեկան օճախ և բազմութիւ զաւակների փոխարէն մէկը լինի, այնուամենայնիւ կատարեալ երջանկութիւնը կը լինի այն գերդաստանում, ուր զաւակների դաստիարակութիւնը յաջող կերթայ, ուր զաւակները կը դառնան բարի և Աստուծոյ ու մարդոյ հաճոյական: Այն հայեցողածքն, որով զաւակ ունենալը համարուում է անպայման երջանկութիւն, հիմնուած է կարելիութիւնն ու իրականութիւնը միմեանց հետ խառնելու վերայ, սկիզբն ու զարգացումն խառնելուն վերայ: Իւրաքանչիւր սկսուող մարդկային կեանքի մէջ բովանդակուում է երջանկութեան կարելիութիւնը: Բայց որպէսզի այս կարելիութիւնը դառնայ երջանկութիւն, որպէսզի այս սկիզբն զարգացման հասնի, և չը դառնայ անէծք ու տրամութիւն—սորա համար անհրաժեշտ են շատ պայմաններ և այն ոչ միայն արտաքին պայմաններ, այլ և այնպիսիք, որոնք հիմնուած են ազապ կոչի գործողութեանց վերայ: Յիսուս Քրիստոս ասում է. «Եին յորժամ ծնանիցի՝ տրամութիւն է նմա. զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ» (Յովհ. Ժզ. 21): Տիրոջ մատնացոյց եղած այս ուրախութիւնն, թէ մարդ ծնաւ յաշխարհ, ցոյց է տալիս ուրախութիւնը նոր սկսուող կեանքի համար անսահման կարելիութեամբ, որ նորա մէջ բո-

վանդակուում է—այս փառքն է «մարդուն», որին տեսնում է մօր աչքն իւր զաւակի մէջ, փառք, որոյ համար նա կոչուած է. բայց որին զեռ ևս չէ հասած: Այսպէս այս ուրախութիւնը հաստատուն ուրախութիւն չէ, նորա հիմքը շատ խախուտ է, և վաղ թէ ուշ կարող է դառնալ տրտմութիւն: Երբ Եւան ծնաւ Կայէ-նին, ուրախութիւնից նա զուարճանում էր, որովհետեւ յոյս էր տածում, որ նա կը լինի օրհնութեան և ուխտի զաւակը, բայց Կայէնը դարձաւ նորա համար վիշտ և տրտմութիւն: Երբ ծնաւ Գաւթի որդին՝ Աբիսողոմը, նոյնպէս ուրախութիւն էր տան մէջ, բայց ուրախութիւնը տրտմութիւն փոխուեցաւ, երբ Աբիսողոմն ապստամբութիւն բարձրացրեց հօր դէմ և Գաւթի տունը լցրեց աղմուկով ու խռովութեամբ: Երբ ծնաւ Յուդա Իսկարիօտացին, ուրախութիւն էր, որովհետեւ «մարդ ծնաւ յաշխարհ»: Բայց և այնպէս նա անիծից զաւակ էր և Փրկիչը նորա մասին ասաց հետեւեալ ծանր խօսքերով. «\աւ էր նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն» (Մատթ. իղ. 24): Իսկական հիմնաւոր ուրախութիւնն այն մասին, թէ մարդ ծնաւ յաշխարհ, կը լինի նորա կեանքի բոլոր ընթացքի ուրախութիւնն, նորա բոլոր պատմութեան ուրախութիւնն, որ նա կատարել է երկրիս վերայ, այն է եթէ այդ կեանքը յիրաւի մասնակից է եղել փառքին, որ նշանակած է մարդու համար. բայց այդպիսի ուրախութիւնը կարող է երեւիլ մեծ փորձութիւններին և վտանգներին յաղթելից յետոյ, չը նայելով որ այդ կեանքն անցել էր մկրտութեան շնորհքի ներքոյ: Սորա վերայ է հիմնուած պայմանական, ենթադրական կողմն այն ուրախութեան, որ բովանդակում է մանկան ծննդեան մէջ. այս դէպքում ուրախութիւնը միշտ միացած պիտի լինի երկիւղի և սարսափի հետ: Արքան մեծ է զաւակների թիւն, այնքան մեծ է, և պատասխանատուութիւնը:

Զաւակները պարգև են, որ երկնքից ուղիղ չէ ընկնում, այլ նրան հայրն և մայրը պէտք է ձեռք բերեն ստեղծագործութեան ագրիւրից: Իսկ արտաքոյ ամուսնութեան ծնեալ զաւակները պարգև չեն, այլ յափշտակութիւն այդ աղբիւրից. այս դէպքում Աստուծոյ պատկերն աշխարհ է բերում հակառակ նորա կամաց թէ և

այս արգելք չէ լինում, որ այստեղ էլ Աստուած մանուկներին ճանաչէ իւր պատկեր և նմանութիւն: Եթէ մենք զաւակներին համարում ենք պարզ և, մենք չը պէտք է մոռանանք, որ այդ պարզ և իսկոյն և անմիջապէս դառնում է մեծ և ծանր խնդիր և ամեն նորածին մանկան հետ երևում է և նոր խնդիր: Այս մասին հանգամանօրէն և խորին խորհրդածութեամբ մտածելու են նոքա, որոնք զաւակներ ունին և աւելի ևս կարող են ունենալ, բայց բաւական չեն խորհում այն մասին, որ իրանց վերայ չափազանց բեռն են առնում, որոնք իրանց ուժերից բարձր են: Այս մասին պէտք է մտածեն ու խորհեն և նոքա, որոնք հոգոց են հանում, որ իրանց ամուսնութիւնն անպտուղ է: Ամուսնացած կինը զգում է խորին և բնական ցանկութիւն զաւակ ունենալու, բայց եթէ նորա ցանկութիւնը, նորա ջերմեւանդ աղօթքն անկատար են մնում, լաւ կը լինէր, որ այդպիսին ինքն իրան հետեւեալ հարցն անէր: Մի՞թէ դու գիտես, որ պարզ և, որ դու սրտանց ցանկանում ես, կը լինի քեզ համար իսկապէս երջանկութիւն: Հաւատո՞ւ ես, որ այն պարզ և, եթէ նա քեզ տրուի, քո առաջդ չի դնիլ այնպիսի խնդիր, որոյ անյաջող լուծումն կը գցի քեզ և ս աւելի խորին տրտմութեան մէջ:

(Կը շարունակուի):